«ԳՅՈՒՄՐՈՒ ՊԱԹՈԼՈԳՈԱՆԱՏՈՄԻԱԿԱՆ ԼԱԲՈՐԱՏՈՐԻԱ» ՓԲԸ –Ի ԿԱՐԻՔՆԵՐԻ ՀԱՄԱՐ ԱՊՐԱՆՔԻ ՄԱՏԱԿԱՐԱՐՄԱՆ ՊԱՅՄԱՆԱԳԻՐ N ԳՊ-ՄԱԱՊՁԲ-20

ք.Գյումրի «08» հունվար 2020թ.

<<Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա>>ՓԲԸ-ն ի դեմս տնօրեն Գ.Մարկոսյանի, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Գնորդ», մի կողմից, և «Նորմա Թերզյան» ՍՊԸ, ի դեմս տնօրեն Հ.Թերզյան, որը գործում է կանոնադրության հիման վրա, այսուհետ «Վաճառող» մյուս կողմից, կնքեցին սույն պայմանագիրը հետևյալի մասին:

1. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԱՌԱՐԿԱՆ

1.1. Վաճառողը պարտավորվում է սույն պայմանագրով (այսուհետ՝ պայմանագիր) սահմանված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով Գնորդին մատակարարել պայմանագրի N 1 հավելվածով՝ Տեխնիկական բնութագիր-գնման-ժամանակացույցով նախատեսված ապրանքը (այսուհետ՝ ապրանք), իսկ Գնորդը պարտավորվում է ընդունել ապրանքը և վճարել դրա համար:

2. ԿՈՂՄԵՐԻ ԻՐԱՎՈՒՆՔՆԵՐԸ ԵՎ ՊԱՐՏԱԿԱՆՈՒԹՅՈՒՆՆԵՐԸ

2.1 Գնորդն իրավունք ունի՝

2.1.1 Ապրանքը պայմանագրով սահմանված ժամկետում Վաճառողի կողմից չմատակարարելու դեպքում հրաժարվել ապրանքից, եթե մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի:

2.1.2 Եթե հանձնվել է անպատշաճ որակի՝ պայմանագրով նախատեսված տեխնիկական բնութագրին չհամապատասխանող ապրանք՝

ա) պահանջել հատուցելու ապրանքի անպատշաճ որակի լինելու պատճառով իր կատարած ծախսերը,

բ) չընդունել ապրանքն՝ իր հայեցողությամբ սահմանելով անպատշաճ որակի ապրանքը պայմանագրին համապատասխանող որակի ապրանքով անհատույց փոխարինման ողջամիտ ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.3 կետով նախատեսված տուգանքը,

գ) հրաժարվել պայմանագիրը կատարելուց և պահանջել վերադարձնելու ապրանքի համար վճարված գումարը:

2.1.3 Եթե հանձնվել է պայմանագրով որոշվածից պակաս քանակի ապրանք, ապա՝

ա) պահանջել լրացնելու ապրանքի պակաս հանձնված քանակը,

բ) հրաժարվել հանձնված ապրանքից և դրա համար վճարելուց, իսկ եթե ապրանքի համար վճարվել է, ապա պահանջել վերադարձնելու վճարված գումարը և վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.4 Եթե հանձնվել է տեսակի պայմանի խախտմամբ ապրանք, իր ընտրությամբ՝

ա) ընդունել տեսակի վերաբերյալ պայմանին համապատասխանող ապրանքը և հրաժարվել մնացած ապրանքներից,

բ) հրաժարվել հանձնված բոլոր ապրանքներից և պահանջել վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը,

գ) պահանջել տեսակի վերաբերյալ պայմանին չհամապատասխանող ապրանքի անհատույց փոխարինում պայմանագրով նախատեսված տեսակին համապատասխան ապրանքով:

2.1.5 Վաճառողի կողմից մատակարարման ժամկետների խախտման դեպքում իր հայեցողությամբ սահմանել ապրանքի մատակարարման նոր ժամկետ և պահանջել Վաճառողից վճարելու պայմանագրի 6.2 կետով նախատեսված տույժը:

2.1.6 Վաճառողից պահանջել հատուցելու վնասները, եթե Գնորդը Վաճառողի կողմից պարտավորությունը խախտելու հետևանքով պայմանագրի լուծումից հետո ողջամիտ ժամկետում այլ անձից ավելի բարձր, սակայն ողջամիտ գնով գնել է ապրանք՝ պայմանագրով նախատեսվածի փոխարեն՝ պայմանագրով սահմանված և դրա փոխարեն կնքված գործարքի գների միջև տարբերության չափով, ինչպես նաև ապրանքն այլ անձից ձեռք բերելու համար իր կատարած բոլոր անհրաժեշտ և ողջամիտ ծախսերը:

2.1.7 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Վաճառողն էականորեն խախտել է պայմանագիրը,

2.1.7.1 Վաճառողի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե՝

ա) մատակարարվել է անպատշաճ որակի ապրանք որը չի կարող փոխարինվել Գնորդի համար ընդունելի ժամկետում,

բ) ապրանքի մատակարարման ժամկետները խախտվել են 5 օրից ավելի,

2.1.8 Ստանալ ապրանքը և հայտնաբերված թերությունների մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2 Գնորդը պարտավոր է՝

2.2.1 Կատարել պայմանագրին համապատասխան մատակարարված ապրանքի ընդունումն ապահովող բոլոր անհրաժեշտ գործողությունները:

2.2.2 Վաճառողի հանձնած ապրանքից պայմանագրին համապատասխան հրաժարվելու դեպքում, ապահովել այդ ապրանքի պատասխանատու պահպանությունը և դրա մասին անհապաղ տեղեկացնել Վաճառողին:

2.2.3 Պայմանագրով նախատեսված կարգով և ժամկետներում մատակարարված ապրանքն ընդունելու դեպքում Վաճառողին վճարել վերջինիս վճարման ենթակա գումարները, իսկ վճարման ժամկետի խախտման դեպքում՝ նաև պայմանագրի 6.5 կետով նախատեսված տույժը:

2.2.4 Ապրանքի քանակի, տեսականու, որակի մասին պայմանագրի պայմանները խախտելու մասին Վաճառողին ծանուցել թերությունը հայտնաբերելուց հետո անմիջապես կամ այն բանից հետո՝ ողջամիտ ժամկետում, երբ պայմանագրի համապատասխան պայմանի խախտումը պետք է հայտնաբերված լիներ՝ ելնելով ապրանքի բնույթից և նշանակությունից:

2.2.5 Պայմանագրի 2.3.3 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Վաճառողին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.3 Վաճառողն իրավունք ունի՝

2.3.1 Գնորդից պահանջել ընդունելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված ապրանքը:

2.3.2 Գնորդից պահանջել վճարելու պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով մատակարարված և Գնորդի կողմից ընդունված ապրանքի համար իրեն վճարման ենթակա գումարները:

2.3.3 Միակողմանի լուծել պայմանագիրը (լրիվ կամ մասնակի), եթե Գնորդն էականորեն խախտել է պայմանագիրը:

2.3.3.1 Գնորդի կողմից պայմանագիրը խախտելն էական է համարվում, եթե բազմիցս խախտվել են ապրանքի համար վճարելու ժամկետները:

2.3.4 Գնորդի համաձայնությամբ վաղաժամկետ մատակարարել ապրանքը:

2.4 Վաճառողը պարտավոր է՝

2.4.1 Գնորդին հանձնել ապրանքը՝ պայմանագրով նախատեսված կարգով, ծավալներով, ժամկետներում և հասցեով:

2.4.2 Ապահովել ապրանքի մատակարարումը պայմանագրի 2.1.2 կետի բ) ենթակետին և (կամ) 2.1.5 կետին համապատասխան՝ Գնորդի կողմից սահմանված ժամկետներում:

2.4.3 Գնորդին հանձնել երրորդ անձանց իրավունքներից ազատ ապրանք:

2.4.5 Գնորդին հանձնել պայմանագրով նախատեսված որակի և քանակի ապրանք՝ պայմանագրով նախատեսված ժամկետներում և հասցեով, իսկ Գնորդի պահանջով տրամադրել ապրանքի որակը հավաստող՝ ՀՀ օրենսդրությամբ սահմանված փաստաթղթեր:

2.4.6 Թերի մատակարարում թույլ տալու դեպքում, պայմանագրով նախատեսված կարգով, լրացնել թերի մատակարարվածը:

2.4.7 Հետ տանել Գնորդի կողմից պայմանագրի 2.2.2 կետին համապատասխան՝ պատասխանատու պահպանության ընդունված ապրանքը կամ ողջամիտ ժամկետում տնօրինել այն, ինչպես նաև հատուցել ապրանքը պատասխանատու պահպանության ընդունելու, այն իրացնելու կամ Վաճառողին վերադարձնելու հետ կապված անհրաժեշտ ծախսերը:

2.4.8 Պայմանագրով նախատեսված դեպքերում վճարել պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը:

2.4.9 Գնորդին հանձնել ապրանքի պատկանելիքները և համապատասխան փաստաթղթերը:

2.4.10 Պայմանագրի 2.1.7 կետի համաձայն պայմանագրի լուծումից հետո Գնորդին հատուցել վերջինիս պատճառված և սահմանված կարգով հիմնավորված վնասները:

2.4.11 Պայմանագրի կատարման ապահովման գործողության ընթացքում լուծարման կամ սնանկացման գործընթաց սկսելու դեպքում դրա մասին նախապես գրավոր տեղեկացնել Գնորդին:

3. ՊԱՅՄԱՆԱԳՐԻ ԳԻՆԸ ԵՎ ՎՃԱՐՄԱՆ ԿԱՐԳԸ

3.1 Պայմանագրի գինը կազմում է 206390 (երկու հարյուր վեց հազար երեք հարյուր իննսուն) ՀՀ դրամ: Պայմանագրի գինը ներառում է պայմանագրի կատարումն ապահովելու նպատակով Վաճառողի կողմից կատարվելիք բոլոր վճարները (ծախսերը), այդ թվում՝ հարկերը, տուրքերը, փոխադրման, ապահովագրման ծախսերը, պարգևավճարները և ակնկալվող շահույթը:

Ապրանքի մատակարարման գինը կայուն է և Վաճառողն իրավունք չունի պահանջել ավելացնելու, իսկ Գնորդը նվազեցնելու այդ գինը:

3.3 Գնորդն իրեն մատակարարված ապրանքի դիմաց վճարում է ՀՀ դրամով անկանխիկ՝ դրամական միջոցները Վաճառողի հաշվարկային հաշվին փոխանցելու միջոցով: Դրամական միջոցների փոխանցումը կատարվում է հանձման-ընդունման արձանագրության հիման վրա՝ պայմանագրի վճարման ժամանակացույցով (հավելված N 2)՝նախատեսված չափերով և ամիսներին: Եթե արձանագրությունը կազմվում է տվյալ ամսվա 20-ից հետո և այդ ամսում վճարման ժամանակացույցով նախատեսված են ֆինանսական միջոցներ, ապա վճարումն իրականացվում է մինչև 30 աշխատանքային օրվա ընթացքում, բայց ոչ ուշ, քան մինչև տվյալ տարվա դեկտեմբերի 20-ը:

4. ԱՊՐԱՆՔԻ ՈՐԱԿԸ ԵՎ ԵՐԱՇԽԻՔԸ

4.1 Վաճառողը երաշխավորում է մատակարարված ապրանքի որակի համապատասխանությունը պետական ստանդարտի պահանջներին:

5. ԱՊՐԱՆՔԻ ՀԱՆՁՆՈՒՄԸ ԵՎ ԸՆԴՈՒՆՈՒՄԸ

5.1 Մատակարարված ապրանքն ընդունվում է Գնորդի և Վաճառողի միջև հանձնման-ընդունման արձանագրության ստորագրմամբ: Ապրանքը Գնորդին հանձնելու փաստը ֆիքսվում է Գնորդի և Վաճառողի միջև երկկողմ հաստատված փաստաթղթով՝ նշելով փաստաթղթի կազմման ամսաթիվը:

5.2 Հանձնման-ընդունման արձանագրությունը ստորագրվում է, եթե մատակարարված ապրանքը համապատասխանում է պայմանագրի պայմաններին: Հակառակ դեպքում պայմանագրի կամ դրա մի մասի կատարման արդյունքները չեն ընդունվում, հանձնման-ընդունման արձանագրությունը չի ստորագրվում և Գնորդը՝

ա) հարցի կարգավորման համար ձեռնարկում է նման իրավիճակի համար պայմանագրով նախատեսված միջոցները,

բ) Վաճառողի նկատմամբ կիրառում է պայմանագրով նախատեսված պատասխանատվության միջոցներ:

5.3 Գնորդը հանձնման-ընդունման արձանագրությունը ստանալու օրվան հաջորդող աշխատանքային օրվանից հաշված 10 աշխատանքային օրվա ընթացքում Վաճառողին է ներկայացնում իր կողմից ստորագրված հանձնման-ընդունման արձանագրության մեկ օրինակը կամ ապրանքը չընդունելու պատճառաբանված մերժումը:

5.4 Եթե պայմանագրի 5.3 կետով սահմանված ժամկետում Գնորդը չի ընդունում մատակարարված ապրանքը կամ չի մերժում դրա ընդունումը, ապա մատակարարված ապրանքը համարվում է ընդունված և պայմանագրի 5.3 կետով սահմանված վերջնաժամկետին հաջորդող աշխատանքային օրը Գնորդը Վաճառողին է տրամադրում իր կողմից հաստատված հանձնման-ընդունման արձանագրությունը:

6. ԿՈՂՄԵՐԻ ՊԱՏԱՍԽԱՆԱՏՎՈՒԹՅՈՒՆԸ

6.1 Վաճառողը պատասխանատվություն է կրում հանձնած ապրանքի որակի և պայմանագրով նախատեսված մատակարարման ժամկետների պահպանման համար:

6.2 Վաճառողի կողմից պայմանագրով նախատեսված ապրանքի մատակարարման ժամկետների խախտման դեպքում Վաճառողից յուրաքանչյուր ուշացված օրվա համար գանձվում է տույժ՝ մատակարարման ենթակա, սակայն չմատակարարված ապրանքի գնի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.4 Պայմանագրի 6.2 և 6.3 կետերով նախատեսված տույժը և տուգանքը հաշվարկվում և հաշվանցվում են Վաճառողին վճարման ենթակա գումարների հետ:

6.5 Գնորդի կողմից պայմանագրի 3.3 կետով նախատեսված ժամկետի խախտման համար Գնորդի նկատմամբ յուրաքանչյուր ուշացված օրվա համար հաշվարկվում է տույժ՝ վճարման ենթակա, սակայն չվճարված գումարի 0,05 (զրո ամբողջ հինգ հարյուրերորդական) տոկոսի չափով:

6.6 Պայմանագրով չնախատեսված դեպքերում կողմերն իրենց պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու համար պատասխանատվություն են կրում ՀՀ օրենսդրությամբ սահմանված կարգով:

6.7 Տույժերի և (կամ) տուգանքի վճարումը Կողմերին չի ազատում իրենց պայմանագրային պարտվորությունները լրիվ կատարելուց:

7. ԱՆՀԱՂԹԱՀԱՐԵԼԻ ՈՒԺԻ ԱԶԴԵՑՈՒԹՅՈՒՆԸ (ՖՈՐՍ-ՄԱԺՈՐ)

Պայմանագրով պարտավորություններն ամբողջությամբ կամ մասնակիորեն չկատարելու համար կողմերն ազատվում են պատասխանատվությունից, եթե դա եղել է անհաղթահարելի ուժի ազդեցության հետևանքով, որը ծագել է սույն պայմանագիրը կնքելուց հետո, և որը կողմերը չէին կարող կանխատեսել կամ կանխարգելել: Այդպիսի իրավիճակներ են երկրաշարժը, ջրհեղեղը, հրդեհը, պատերազմը, ռազմական և արտակարգ դրություն հայտարարելը, քաղաքական հուզումները, գործադուլները, հաղորդակցության

միջոցների աշխատանքի դադարեցումը, պետական մարմինների ակտերը և այլն, որոնք անհնարին են դարձնում սույն պայմանագրով պարտավորությունների կատարումը: Եթե արտակարգ ուժի ազդեցությունը շարունակվում է 3 (երեք) ամսից ավելի, ապա կողմերից յուրաքանչյուրն իրավունք ունի լուծել պայմանագիրը՝ այդ մասին նախապես տեղյակ պահելով մյուս կողմին:

8. ԱՅԼ ՊԱՅՄԱՆՆԵՐ

8.1 Պայմանագիրն ուժի մեջ է մտնում Կողմերի ստորագրման պահից և գործում է մինչև կողմերի՝ պայմանագրով ստանձնած պարտավորությունների ողջ ծավալով կատարումը:

8.2 Պայմանագրից ծագած՝ կողմի վճարային պարտավորությունը չի կարող դադարել այլ պայմանագրից ծագած՝ հակընդդեմ պարտավորության հաշվանցով, առանց կողմերի գրավոր և կնիքով հաստատված համաձայնության: Պայմանագրից ծագած պահանջի իրավունքը չի կարող փոխանցվել այլ անձի, առանց պարտապան կողմի գրավոր համաձայնության:

8.3 Պայմանագրի հետ կապված վեճերը ենթակա են քննության Հայաստանի Հանրապետության դատարաններում:

8.4 Պայմանագրում փոփոխություններ և լրացումներ կարող են կատարվել միայն Կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ համաձայնագիր կնքելու միջոցով, որը կհանդիսանա պայմանագրի անբաժանելի մասը:

Արգելվում է պայմանագրում, իսկ եթե պայմանագրի գինը գործոնային է, ապա նաև այդ պայմանագրին կից հաջորդող յուրաքանչյուր տարիներին կնքված համաձայնագրում կատարել այնպիսի փոփոխություններ, որոնք հանգեցնում են գնվող ապրանքի ծավալների կամ ձեռք բերվող ապրանքի միավորի գնի կամ պայմանագրի գնի արհեստական փոփոխման:

8.5 Ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մինչև պայմանագրով այդ ժամկետը լրանալը՝ Վաճառողի առաջարկության առկայության դեպքում, պայմանով, որ Գնորդի մոտ չի վերացել ապրանքի օգտագործման պահանջը: Ընդ որում սույն կետով սահմանված դեպքում ապրանքի մատակարարման ժամկետը կարող է երկարաձգվել մեկ անգամ մինչև 30 օրացուցային օրով, բայց ոչ ավել քան պայմանագրով սահմանված ժամկետն է:

8.6 Պայմանագրի պատշաճ կատարման պայմաններում կողմերի (Վաճառող կամ Գնորդ) օգուտները (խնայողություններ) կամ կրած վնասները տվյալ կողմի օգուտը կամ կրած վնասն են:

Պայմանագրի կողմերի՝ երրորդ անձանց նկատմամբ պարտավորությունները՝ ներառյալ պայմանագրի կատարման շրջանակում Վաճառողի կնքած այլ գործարքները և դրանցից բխող պարտավորությունները, դուրս են պայմանագրի կարգավորման դաշտից և չեն կարող ազդել պայմանագրի կատարման արդյունքն ընդունելու վրա: Այդ գործարքների և դրանցից բխող պարտավորությունների կատարման հետ կապված հարաբերությունները կարգավորվում են այդ գործարքների հետ կապված հարաբերությունները կարգավորող նորմերով, և դրանց համար պատասխանատու է Վաճառողը:

8.7 Պայմանագիրը չի կարող փոփոխվել կողմերի պարտավորությունների մասնակի չկատարման հետևանքով կամ ամբողջությամբ լուծվել կողմերի փոխադարձ համաձայնությամբ՝ բացառությամբ՝ Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցման դեպքերի: Ընդ որում, պայմանագրի կողմերի՝ պարտավորությունների մասնակի չկատարման կամ ամբողջությամբ լուծման կողմերի փոխադարձ համաձայնությունն անհրաժեշտ է ձեռք բերել նախքան Հայաստանի Հանրապետության օրենսդրությամբ սահմանված կարգով ապրանքի մատակարարման համար անհրաժեշտ ֆինանսական հատկացումների նվազեցումը:

8.8 Վաճառողի կողմից ստանձնած պարտավորությունները չկատարելու կամ ոչ պատշաճ կատարելու հիմքով պայմանագիրն ամբողջությամբ կամ մասնակի միակողմանի լուծելու մասին ծանուցումը Գնորդը հրապարակում է www.procurement.am հասցեով գործող ինտերնետային կայքի «Պայմանագրերը միակողմանի լուծելու մասին ծանուցումներ» բաժնում՝ նշելով հրապարակման ամսաթիվը: Վաճառողը, պայմանագիրը միակողմանի լուծելու վերաբերյալ, համարվում է պատշաճ ծանուցված՝ ծանուցումը, սույն կետով սահմանված հրապարակվելուն հաջորդող օրվանից:

8.9 Պայմանագրի կապակցությամբ ծագած վեճերը լուծվում են բանակցությունների միջոցով: Համաձայնություն ձեռք չբերելու դեպքում վեճերը լուծվում են դատական կարգով:

8.10 Պայմանագիրը կազմված է ____ էջից, կնքվում է երկու օրինակից, որոնք ունեն հավասարազոր իրավաբանական ուժ, յուրաքանչյուր կողմին տրվում է մեկական օրինակ: Պայմանագրի N 1, N 2, N 3 և N 3.1 հավելվածները, համարվում են պայմանագրի անբաժանելի մասը:

8.11 Պայմանագրի հետ կապված հարաբերությունների նկատմամբ կիրառվում է Հայաստանի Հանրապետության իրավունքը:

10. Կողմերի հասցեները, բանկային վավերապայմանները և ստորագրությունները

ԳՆՈՐԴ	ՎԱՃԱՌՈՂ
«Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ	«Նորմա Թերզյան» ՍՊԸ
ՀՎՀՀ 05510611	ՀՎՀՀ 05519006
Բանկ «Արդշինբանկ» ՓԲԸ Գյումրու մ/ճ	Բանկ ՀայԷկոնոմԲանկ ԲԲԸ Գյումրու մ/ճ
2478918000360000	163127846794
Հասցե՝ ք.Գյումրի, Չայկովսկու 6	Հասցե՝ ք. Գյումրի Արովյան 248
Էլ. Փոստ gyumri.pathologoanatomis@mail.ru	Էլ. Փոստ՝
Տնօրեն՝ Գ.Մանվելյան	Տնօրեն՝ Հ.Թերզյան
/ստորագրություն/	/ստորագրություն/
Կ.Տ.	Կ.Տ.

«Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա » ՓԲԸ-ի
2020թ.-ի կարիքների համար գնման ենթակա գրենական պիտույքների
ՏԵԽՆԻԿԱԿԱՆ ԲՆՈՒԹԱԳԻՐ

Չափաբաժին	Գնման առարկայի անվանում	Չափման միավոր	Քանակ	Գնման առարկայի տեխնիկական և այլ բնութագրիչ տվյալները	Միավորի գինը	Ընդամենը/ՀՀ դրամ/
1	2	3	4	5	6	7
1	Արագակար	հատ	30	Արագակար «Գործ» Ստվարաթղթից, A4 չափի փաստաթղթերի համար, մետաղական ամրակով: Խտությունը՝230գ/ք.մ:	80	2 400,0
2	Գրիչ	Հատ	50	Գրիչ գնդիկավոր, պլաստմասե,թափանցիկ իրանով, կափարիչով կապույտ,սև կամ կարմիր գույների :	80	4 000,0
3	Գրիչ	Հատ	40	Գրիչ գնդիկավոր, պլաստմասե,թափանցիկ իրանով, կափարիչով կապույտ,սև կամ կարմիր գույների :	100	4 000,0
4	Մատիտ	Հատ	20	Մատիտ սովորական, ռետինով, HB: Փայտյա, կարծր կամ փափուկ գրաֆիտով, «Конструктор» կամ համարժեք:	80,0	1 600,0
5	Ջնջոց	Հատ	10	Ռետինե ջնջոց 30 մմ նախատեսված մատիտով գրվածքները մաքրելու համար: «FABER-CASTTELL» կամ համարժեք:	200,0	2 000,0
6	Թուղթ	կգ	100	Թուղթ A4 ֆորմատի գունավոր : Թուղթ սպառողական ձևաչափերի, ոչ կավճապատ: Նախատեսված է գրելու, տպագրելու և գրասենյակային աշխատանքների համար: Չափերը՝ 210x297մմ,կանաչ, կապույտ կամ դեղին գույների. խտությունը 80գ/մ2.	720,0	72 000,0
7	Ամրակ	Հատ	200	Գրասենյակային ամրակներ (Սկրեպ), մետաղական, վինիլային ծածկույթով, 30 մմ: Թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար:	2,00	400,0
8	Թղթապանակ ֆայլով	հատ	10	Թղթապանակ ցուցադրական, A4 ֆորմատի, 30 թափանցիկ ֆայլով, կանաչ:	400,0	4 000,0
9	Թղթապանակ	հատ	15	Թղթապանակ սեղմակով, A4 ֆորմատի:	350,0	5 250,0
10	Թղթապանակ	հատ	25	Թղթապանակ ռեզինե կապով, A4 ֆորմատի, ներքին և արտաքին գրպանիկներով,տարբեր գույների: «Dolphin» կամ համարժեք:	350	8 750,0
11	Ջնջիչ	հատ	12	Ջնջիչ շտրիխ գրիչատիպ 6մլ: «Flamingo» կամ համարժեք:	350	4 200,0
12	Սրիչ	Հատ	5	Սրիչ մատիտի համար սովորական, պլաստիկ, առանձ պահուցի, ամրացվող: «Maped» կամ համարժեք:	200,0	1 000,0
13	Մկրատ	Հատ	5	Մկրատ միջին, 15սմ երկարությամբ:	400,0	2 000,0
14	Մկրատ	Հատ	2	Մկրատ միջին, 15սմ երկարությամբ:	600,0	1 200,0
15	Գրասենյակային գիրք	հատ	10	Գրասենյակային գիրք,A4 ձևաչափի (210X297 մմ) ,սպիտակությունը ոչ պակաս քան 70%, խտությունը 45-50գ/ք.մ. , 96 թերթ, կոշտ կազմով:	2 000,0	20 000,0
16	Թղթապանակ ռեգիստր	Հատ	8	Թղթապանակ ռեգիստր, երկօղականի, A4 ֆորմատի, հաստություն 4 սմ,տարբեր գույների: «FIS» կամ համարժեք:	800,0	6 400,0
17	Ֆայլ	Տուփ	2	Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 40 միկրոն, թափանցիկ: «Flamingo» կամ համարժեք:	1 000,0	2 000,0
18	Ֆայլ	Տուփ	2	Ֆայլ, պոլիէթիլենային A4 ֆորմատի, 50 միկրոն, թափանցիկ: «Impulse» կամ համարժեք:	2 000,0	4 000,0
19	Նշումների թուղթ կպչուն	Տուփ	5	Նշումների թուղթ ինքնասոսնձվող, 37մմ x 51մմ չափերի , 100 թերթ, դեղին գույնի: «Fantastick (EU)» կամ համարժեք:	300,0	1 500,0
20	Նշումների թուղթ կպչուն	Տուփ	3	Նշումների թուղթ ինքնասոսնձվող,76մմ x 76մմ չափերի, 100 թերթ, դեղին գույնի: «Fantastick (EU)» կամ համարժեք:	200,0	600,0

21	Նշումների թուղթ կպչուն	Տուփ	3	Նշումների թուղթ՝ ինքնասոսնձվող 76մմ x 102մմ, դեղին գույնի,100թերթ: «Fantastick (EU)»կամ համարժեք:	280,0	840,0
22	Կարիչ	Հատ	5	Փոքր, կարիչ գրասենյակային՝ 20 էջ կարելու համար: Օգտագործվող ասեղների քանակը՝ 50, ասեղի համարը՝N10: **«Kangaro» HS-10EN կամ համարժեք:**	800,0	4 000,0
23	Հաշվիչ		3	Հաշվիչ սեղանի , 12 նիշ,միջին չափի, սնուցման 2 աղբյուր,գործողությունները ցուցադրումով վահանակի վրա, ինքնաիջեցվողով:	1 500,0	4 500,0
24	Թանաք	հատ	5	Թանակ տուփի բարձիկների համար, 30մլ./ տարբեր գույներ /:	350,0	1 750,0
25	Քանոն	Հատ	5	Ուղիղ քանոն զծաբաժանումներով, առավելագույն երկարությունը՝ 30սմ,պլաստմասե նյութից: **«Flamingo» կամ համարժեք:**	100,0	500,0
26	Սոսինձ չոր	Հատ	10	Սոսինձ չոր, չափազրված 35գր: **«FANTASTIK» կամ համարժեք:**	200,0	2 000,0
27	Սոսինձ չոր	Հատ	10	Սոսինձ չոր, չափազրված 50գր: **«FANTASTIK» կամ համարժեք:**	300,0	3 000,0
28	Թղթապանակ		*12*	Թղթապանակ արագակար, A4 ֆորմատի, հաստ կողով տարբեր գույների: «Cosmic» կամ համարժեք:	**450**	5 400,0
29	Գրասենյակային գիրք	Հատ	10	Գրասենյակային գիրք: A5 ֆորմատի,լրագրային թղթից,խտությունը 45-50գ/ք.մ.,սպիտակությունը ոչ պակաս քան 70%, 96 թերթ, վանդակավոր,ամուր կազմով: «SinAr» կամ համարժեք: :	800	8000
30	Դրամարկղի գիրք	Հատ	1	Դրամարկղային գիրք. A4 ձևաչափի, օֆսեթային թղթից,երկկողմանի տպագրությամբ, սպիտակությունը ոչ պակաս քան 90%, խտությունը 80գ/ք.մ. կավճաթուղթ կազմով 350գ/ք.մ, 50թերթ, մետաղակար,սոսնձված,կողքի մասի լիդերինապատումով:	2 000,0	2 000,0
31	Կարիչի ասեղ	Տուփ	20	Փոքր ասեղ, գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 10մմ/6մմ: Տուփի մեջ 1000 հատ: **«Kangaro» կամ համարժեք:**	80,0	1 600,0
32	Կարիչի ասեղ	Տուփ	20	Միջին, ասեղ գրասենյակային կարիչների (ստեպլեր) համար, 24մմ/6մմ : Տուփի մեջ 1000 հատ : **«Kangaro» կամ համարժեք:**	150,0	3 000,0
33	Սեղմակ	Հատ	30	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 25 մմ, արդյունավետ ամրեցնում է 60-90 թերթ:	20,0	600,0
34	Սեղմակ	Հատ	30	Մետաղական,թղթի տրցակները միմյանց հետ ամրացնելու համար, լայնությունը 41 մմ, արդյունավետ ամրեցնում է 120-150 թերթ:	30,0	900,0
35	Տետր	հատ	10	Տետր A5 ֆորմատի, 48 թերթ	300	3 000,0
36	Նոթատետր	Հատ	10	Նոթատետր, A4 ֆորմատի, տողանի, 70 թերթ:	1800	18 000,0
	ԸՆԴԱՄԵՆԸ					206 390,0

ԳՆՈՐԴ

«Գյումրու պաթոլոգոանատոմիական լաբորատորիա» ՓԲԸ
ք.Գյումրի, Չայկովսկու 6
ՀԱՀ՝ 05510611
Բանկ՝ Կոդշինբանկ ԲԲԸ
Հ/Հ 2478918000360000
Էլ.փոստ՝ gyumri.patologoanatomia@mail.ru
Տնօրեն՝ Գ.Մարկոսյան

ՄԱՏԱԿԱՐԱՐ

«Նորմա Թերզյան» ՍՊԸ
Ք. Գյումրի Աբովյան 248
ՀԱՀ՝ 05519006
Բանկ՝ Հայէկոնոմբանկ ԲԲԸ
Հ/Հ 16312784679
Էլ.փոստ՝
Տնօրեն՝ Հ.Թերզյան